


ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ



ԵՐՈՒԱՆԴ ԱՋԱՏԵԱՆ
(1935--2023)

Սփիւռքահայ խմբագիր, հասարակական գործիչ Երուանդ Ազատեան (բուն անունով՝ Էտմոն Կոտալազեան) ծնած է Ռայաք, Լիբանան, 1935ին: Ուսումը ստացած է Յիսուսեան հայրերու Ս. Գրիգոր Լուսաւորիչ ճեմարանին եւ ՀԲԸՄ Յովակիմեան-Մանուկեան վարժարանին մէջ: Յաճախած է

Պէյրութի ամերիկեան համալսարանը եւ վկայուած առեւտրական վարչագիտութեան ճիւղէն: Պոսթոնի եւ Տիրթոյթի մէջ հետեւած է անգլիական եւ ամերիկեան գրականութեան ու միջինարեւելեան ուսմանց համալսարանական ԵՊՀԷ եւ ԽԱՀՊՄՀԷ:

Գործուն մասնակցութիւն ունեցած է ռամկավար-ազատական մամուլին մէջ՝ Լիբանան, Եգիպտոս, Մ. Նահանգներ եւ Քանադա: Զանազան պաշտօններ վարած է ՀԲԸՄ, ԹՄՄ, ՌԱԿ եւ Ամերիկայի հայկական համագումարի ղեկավար մարմիններէն ներս:

Ան անդամ էր Հայաստանի գրողներու եւ Հայաստանի լրագրողներու միութեանց, ինչպէս նաեւ Արտասահմանեան անդամ ՀՀ ԳԱՄի: Իբրեւ անդամ գրական եւ լրագրական մրցանակներու, մանաւանդ իբրեւ աւետնապետ ՀԲԸՄ Ալեք Մանուկեան մշակութային հիմնադրամի, մեծ ծառայութիւն մատուցած է հայրենի եւ սփիւռքահայ գրական գործին: Արժանացած է եկեղեցական, միութենական եւ պետական շքանշաններու:

Անոր գրական-գրաքննադատական եւ հրապարակագրական գործերը կ'ամփոփուին հետեւեալ հատորներուն մէջ. *Կեանք եւ երազ* (1964), *Գրական գեղարուեստական սեւեռումներ* (1988), *Դիպումներ եւ դապումներ* (2006) եւ *Ազգային-քաղաքական յորձանուրի մէջ՝ 2* հատոր (2021): Անգլերէնով լոյս ընծայած է *Portraits and Profiles* (1995) եւ *History on the Move* (1999) (անգլերէնները խմբագրած են Յակոբ Խաչիկեան եւ Էտուըրտ Ֆրանչուք): Ազատեանի *Գրական գեղարուեստական սեւեռումները* կ'ամփոփէ հեղինակին 1960-80ականներուն ստորագրած գրականագիտական եւ արուեստագիտական էջերը, առաւելաբար արեւմտահայ եւ սփիւռքահայ գրողներու, արուեստագէտներու մասին խոհեր, գրախօսականներ, կենդանագրեր: *Portraits and Profiles* հատորը եւս ունի նման ուղղութիւն. ան անգլերէնով գրուած կամ անգլերէնի թարգմանուած գրախօսականներու, հարցազրոյցներու, կենդանագրերու եւ յօդուածներու ընտրանի մըն է:

Երուանդ Ազատեան մահացաւ 25 Մարտ 2023ին, Ֆլորիտա, ԱՄՆ: